

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առ շաբաթը).

Նայտարարութիւնը ընդունվում է ամեն լիցուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Նաւթային ընկերութիւնների առիթով.—
Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Մասնա-
գրութիւն. Նաւթահողերի անուրջը. Տուէք
որդոք. Նամակ կազմուանից. Նամակ Շու-
չուց. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Կանանց հարցը ֆրանսիական սենա-
տում. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
Գաւառական նամակներ.

ՆԱԽԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԻ- ԹՈՎ

Նաւթաբեր հողերի աճուրդը, որ պէտք
է տեղի ունենայ Բազում նոյնմերի
15-ին, յարուցել է մեծ հետաքրքրու-
թիւն և իրարանցում մեր առևտրական-
ների և արդիւնագործների շրջանում:
Նախկին աճուրդներին մասնակցում էին
միայն բազումցիները և նրանցից էլ միայն
մի սահմանափակ շրջանի անձինք, որոնք
ծանօթ էին նաւթային գործերին և ու-
նեն մեծ գրամաշուկաներ: Ներկայ աճուր-
դը բոլորովին ուրիշ կերպարանք է ստա-
ցել: Մասնակցողների մէջ շատ կան
ընկերակցութիւններ, որոնք կազմվել են
յատուկ այն նպատակով, որ միացեալ ոյ-
ժերով վերցնեն նաւթաբեր հողեր և շա-
հադործեն նրանց: Ընկերակցութիւնների
մի մասը գրաւել է խոշոր բաժնետէրեր,
իսկ մի նշանաւոր մասն էլ միացրել է փո-
քոր բաժնետէրերի, որոնք տուել են այդ
գործին իրանց խնայողութիւնները կամ
նոյն իսկ պարտք են արել ու այդպիսով
ձեռք բերել մի երկու բաժին:

Մեր համարում թեմա ենք վերաբեր-
վել արդիւնագործական ընկերակցութիւն-
ների կազմվելու գաղափարին և ցանկացել
ենք, որ մեր երկրի մէջ զարգացող խոշոր
արդիւնագործութիւնը չը կենտրոնանայ
մի քանի բացառիկ գրամատէրերի ձեռ-
քում, այլ դառնայ բազմաթիւ մարդկանց
սեփականութիւն, կամայ-կամայ պատրաս-
տելով հող այնպիսի գործառնութիւնների
համար, որտեղ աշխատող մարդը ինքը
կարողանար մասնակցել և տէր հանդիսա-
նալ արդիւնագործութեան մէջ: Ընկերակ-
ցութիւնների կազմվելը օգտաւէտ է
գաւառում և այն տեսակէտից, որ նրանց մի-
ջոցով կարելի է դառնում առաջ բերել
խոշոր գրամաշուկաներ, որոնց պակասու-
թիւնը մեր երկրում շատ զգալի է և

ստիպում է մեզ աչք անկել օտարերկրեայ
կապիտալների վրա և սպասել նրանց
մուտքին մեր երկրի մէջ:

Մակայն մեր երկրում ընկերակցութիւն-
ներ կազմելու նոր գործը շատ զեպքերում
առաջ է տարվում սխալ կերպով և մա-
տաղահաս ընկերակցութիւնները թող են
տալիս իրանց սպէկուլեացիա և բոքսա-
խաղ: Ընկերակցութիւնների կազմակերպող-
ները ձեռնարկում են, օրինակ, նաւթային
գործին ոչ իբրև արդիւնագործութեան
համակողմ անձինք, այլ իբրև շահախնդիր-
ներ, որոնք ղեկավարութիւն ունեն մի ա-
ջող առևտուր, մի փայլուն գեղեցիկ անել
և ոչինչ չիրագործած, ոչ մի արդիւնագոր-
ծութեան չը դիմած, մի քանի հարիւր
կամ մի քանի հազար ռուբլիներ դնել ի-
րանց զրգանք:

Դա վտանգաւոր ձանապարհ է, որը կա-
րող է կոտրել ընկերակցութիւնների ա-
նունը և դարձնել նրանց կազմվելը մի տը-
խուր և ոչ ցանկալի երևոյթ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Իւրաքանչիւր տարի գարնանը, ամեն անգամ,
երբ երկինքը ծածկվում է ամպերով, մեր գիւ-
ղական ժողովուրդը ա՛ն ու սարսափի մէջ է
ընկնում. գիւղատնտեսութեան ամենակատարի
թշամի կարկուտը սպառնում է ամեն մի բո-
ւսէ վրա յարձակել և մի քանի ժամում ոչն-
չացնել հազարաւոր մարդկանց դառն բրտինքի
պտուղը, նրանց ամբողջ յոյսն ու ապահէնը:
Երկու տարի է, ինչ մենք ականատես ենք, թէ
ինչ աւերումներ է գործում կարկուտը մեր
երկրում. աղէտը այնքան մեծ էր, նրա պատ-
ճառած զգալիութիւնները այնքան լայնատա-
րած են անբուսելի էին, որ մեր գաւառները,
ինչպէս այս կարելի էր նկատել «Մշակ» մէջ
սովորած շատ տեղեկութիւններից, կարծես դա-
լիս էին այն համոզումներին, թէ պէտք է դիմել
ցանքերի սպանողութեան միջոցին: Դա,
ի հարկէ, շատ ցանկալի մի միջոց է. բայց
զգալիութիւնն այն է, որ սպանողութեան
թեմա միտքը, առնասարակ, շատ դանդաղ
կերպով, դժուարութեամբ է ժողովրդականա-
նում նոյն իսկ մեզանից աւելի զարգացած աղ-
գերի մէջ: Այդ պատճառով հարկաւոր է ժողո-
վրդականացնել մեր մէջ կարկուտի հարուած-
ներից ազատվելու մի ուրիշ միջոց: Արտասահ-
մանում մի քանի տարի է, ինչ կարողացել են

հնարել կարկուտներ ամպերը ցրվելու միջոց:
Շինում են թնդանօթի նման գործիքներ, որոն-
ցով, եթէ կարելի է այսպէս ասել, անբախտում
են ամպերը և ցրվում են նրանց Տարեցտարի,
ինչպէս հաղորդում է «Кавказское Сельское
Хозяйство» շաբաթաթերթը, այս միջոցը աւե-
լի և աւելի տարածվում է: Շնորհիւ այդ մի-
ջոցի, շատ տեղեր ազատվել են կարկուտի պէս
մի անելի թշնամուց և վերջերս լուր տա-
րածվեց, որ այդ հակակարկուտային թնդանօթ-
ները մուտք են գործել և Անդրկովկաս. նը-
րանք պիտի գործեն Կարսից, արեւելի այդ-
գիւղերի համար: Շաբաթաթերթը այդ առիթով
ցանկութիւն է յայտնում, որ կարկուտահարու-
թիւններից ազատող այդ օգտակար միջոցը
տարածվի մեր երկրի շատ կողմերում—մի
միտք, որ, ի հարկէ, ամենայն համակրանքի է
արժանի:

Երբ մի անգամից գտնված է միջոց, որ
կարող է կարկուտ գոյանալու առաջն անել,
ինչու չը պէտք է գործադրել այդ միջոցը
գիւղացիների աչքի առաջ հաւաքվող կար-
կուտներ ամպերի դէմ: Աւելի լաւ է մի քա-
նի հազար ռուբլի ծախսել կարկուտահարու-
թեան դէմ կայարաններ հիմնելու համար,
քան սպարդիւն կերպով տաննակ կամ հա-
րիւրաւոր հազարներ զո՛հ բերել կարկուտին,
վտանգի ենթարկել հողագործների աշխա-
տութիւնը և նրանց բարեկեցութիւնը:

Երեկաների համար էլ պարզ պիտի լինի, որ
այն, երբ անթիւ տառապանքները կարելի է վի-
րացնել մի քանի հազար ռուբլով, այդտեղ այլ եւս
չը պէտք է տատանվել: Գիւղատնտեսական շա-
բաթաթերթը հաւատացնում է, որ Բօքսալուի
գիւղերից մէկի ընկերակցութիւնը պատրաստ են
դրամական բոլոր գործողութիւններն անել,
եթայն թէ իրանց սովորեցնեն թէ ինչպէս
պէտք է կուել ընտելեան այդ պատահական
աղէտի դէմ: Հարցի ամենազգուշացող, օղբեր-
գական մասն էլ հէնց այդ է. պէտք է սովո-
րեցնել ժողովուրդին, իսկ ո՞վ պիտի սովորեցնէ:
Ամեն ինչ վերաբերել տեղեկութեան և ապա
հանգիստ քնն—այսպէս են մեզանում վերա-
բերվում դէպի ամեն մի գործ, որ կոչված է
ժողովուրդի թշուառութիւնները ամբողջում հա-
մար: Զը կայ մեր ժողովրդական կեանքի մէջ
մի տխուր երևոյթ, որին նայողը չընկճվէր
տխուր իրականութեան տակ.—կայ տանջանք,
բայց չը կայ թշնոյ, կան ցաւեր, բայց բա-
ցակալում են առաջնորդներ: Մեր երկրասար-
գութիւնը, մեր մասնագէտները այժմ միայն
մի երազ ունեն—առաջ տեղ նաւթային թագա-
ւորների ծոցում: Մեր երկրում մնում է միայն
մի հիմնարկութիւն, որի չուրջը խմբված գոր-

ծիչները ցոյց են տալիս, որ հետաքրքրվում են
գիւղական ժողովուրդի գործերով: Դա կովկա-
սեան Գիւղատնտեսական ընկերութիւնն է: Թող
նա գտնէ այս զեպքում գործնական առաջնորդ
հանդիսանայ, թող գէթ մի զեպքում ցոյց տան
մասնագէտները, որ բայի գրելուց ու ձառեր
արտասանելուց նրանք գիտեն և կհանքի մէջ
մտնել ու կենդանի գործ էլ ստեղծել:

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

В. Тотомианъ, „Мощь кооперация“. 24 стр. и. 20 коп.
С.-Петербургъ 1900

Այն գրամատէրերը, որոնք ապրանքներ են
արտադրում, շահվում են, այդ յայտնի է վա-
րուց: Այն գրամատէրերը, որոնք, իբրև առև-
տրականներ, միջնորդի դեր են կատարում
ապրանք արտադրողի և ապրանք գործածողի,
սպառողի մէջ, նոյնպէս շահվում են, այդ էլ
յայտնի է: Ո՞վ է տալիս այդ շահը գրամատէ-
րերին—բանտորները և ապրանք ատնող
սպառողները: Արդեօք չէ կարելի, որ ապրանք
սպառողները հէնց իրանք էլ արտադրան ապ-
րանքը կամ ուրիշների արտադրած ապրանքը
անեն ուղղակի արտադրողից, առանց վաճառա-
կանների միջնորդութեան,—այդ հարցին է պա-
տասխանում կօօպերացիաների, ընկերակցու-
թիւնների փորձը քաղաքակիրթ երկրներում,
և պատասխանում է գրական կերպով:

Այդ ընկերակցութիւնները, որոնք այժմ մի
փայլուն արտայայտութիւն են հասարակական
ինքնագործունէութեան, ունեն իրանց պատ-
մութիւնը: Զուտ արտադրական ընկերակցու-
թիւնների (производительная кооперация) փոր-
ձերը տապալվեցին: Զուտ սպառողական ըն-
կերակցութիւնները (потребительная коопера-
ция) աղողութիւն ունեցան, բայց չը ստացան
շատ ընդարձակ չափեր: Այժմ այդ երկու տիպի
զուգակցութիւնն է, որ ահազին զարգացում
է ստանում սպառողական—արտադրական ըն-
կերակցութիւնների ձևով:

Այդ ընկերակցութիւնների ահազին և բա-
րեւար ոյժն է լուսաբանում պ. Վ. Տոտոմանց
իր գրքովում հետաքրքիր և համոզեցողիչ
փաստերով:
Եթէ ի նկատի ունենանք, որ ապրանքների
մեծ մասը սպառում է հասարակ ժողովուրդը
(Մասաչուսէտի պետական վիճակագիրը, օրի-
նակ, հաշու է, որ արտադրութիւնների առ-
նուադն 80%—ը սպառում է հասարակ ժողո-
վուրդը. Գերմանիայում, Մայի հաշուով, չա-
տորները գործ են անում անուազն վեց ան-
գամ աւելի ապրանք, քան հարուստները) և

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԳԱՆԱՌԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

„Alles war gesagt, doch
„Alles bleibt zu sagen.“
G ö t t e

Ես շատ սիրում եմ մեր աշխարհի գարունը,
նա շատ աղմկալից է և եւ շատ գրուելի: Երբ
ձեռք վերջանալու վրա է և մեր լեռներից
ու դաշտերից սկսում է գարնան հոտ բուրբի,
կանաքը վերսկսվում է ամենուրեք: Զիւնը վե-
րանում է, գետերն աղմկում, աշխարհ են գա-
լիս հազար ու մէկ յայեր ու ջրեր և որոտա-
լից ընտելները, կախարհելով մեր երկիրը,
կանաքի է կոչում բոլորին և ամեն տեղ: Այդ
ժամանակ սկսվում է մեր աշխարհի հոգակա-
ւոր քօչը:

Մեր երկիրը նոյնպէս երկրագործական է,
որքան և իսպանիան. ամեն մի գիւղ ունի
լեռներով իր արտատեղին, իր ելալը, իր
իւրը, ուր արտեցտարի, աւանական ժա-
մանակներից, քոչում է իր տաւարով, ոչխար-
ներով, իր զբարդ ու բարխանով: Այդ քօչը
սահմանափակվում է ոչ թէ մի գաւառով, այլ
անցնում է մի քանի գաւառներ, նոյն իսկ մի

քանի նահանգներ: Այսպէս, օրինակ, Բագուի
նահանգի թուրքերը (թարաքանա) ելլալ են
գալիս դէպի Հին-Նախիջևանի սահմանները
(Բիչանակ, Քեչլիդաղ), իսկ Թիֆլիս նահանգի
Աղախի թուրքերը և Գանձակի նահանգի
խաչնարածները (Քհարբլ—Շուշու և Զիւան-
չիբի գաւառներից) հեղեղում են Սեւանի լճի
մի կողմը, որ ընկած է Երեւանի նահանգի
Նոր-Բայազէտի գաւառում:

Անդրկովկասի քօչը նոյնքան աղմկալից է,
որքան որ և մեր գարնան չափը. այդ քօչը
սկսվում է գարնան առաջին օրերից և առաջ է
գնում նոյն չափով, որ չափով որ հալվում են
լեռների ձիւները: Դա էլ մի տեսակ կենդանի,
մարդկային հեղեղ է, որ անցնում է չէն տե-
ղերով, արտերով, խոտատեղերով և շատ ան-
բաժնալի դարձնում այն տարածութիւնները,
որոնք անխնամ էին այդ ժամանակվա ծոցում:
Ինչ ասել կուզէ, ի հարկէ, որ ամեն մի քօչ,
ամեն մի գիւղական հասարակութիւն, որ
ելլալ է գնում, ունի իր որոշ ձանապարհը,
որով և պէտք է ընթանայ. այնու ամենայնով,
գարնան սկզբին, գաւառական կառավարու-
թիւնները հարիւրաւոր գանգատներ են տե-
ղում այն վիճանների մասին, որ պատճառել է
քօչը այս կամ այն գիւղական հասարակու-
թեանը նրա արտերի միջով անցնելիս: Այսպէս,
օրինակ, մի 12 տարի սրանից առաջ էլ ջիւիած-
նի նախկին գաւառապետ Սան-Աղեան հաղոր-

դեց Երեւանի նահանգապետին, որ Սուրմալու
գաւառի փոքր Բաղիքի քուրդ հասարակու-
թիւնը, որ տարիների ընթացքում գարնան
սկզբին քոչում է դէպի Արագած, էլ ջիւիածնի
գաւառ, շատ երկար կանգ է անում էլ ջիւիած-
նի գաւառի Արաքսի ափում և մեծ վիճաններ
է պատճառում այդ տեղին: Այդ հիման վրա,
գաւառապետ Սան-Աղեան խնդրում էր նա-
հանգապետին արգելել Սուրմալուի այդ քուր-
դին այդքան երկար կանգ անել այդ տափա-
րակի վրա: Այդ խնդրի առիթով մեծ գրապու-
թիւն բացվեց երկու հարեւան գաւառապետ-
ների մէջ: Սուրմալուի նախկին գաւառապետ
Շ. Փիւրումեան, ոչ պակաս ժողովրդագէտ և
նոյնպէս, որպէս և Սան-Աղեան, շատ հեղինա-
կաւոր գաւառապետ, բացատրեց, որ Բաղիքի
քուրդի ոչնչացումը ծնում է Արաքսը անցնելուց
անմիջապէս յետոյ, որ ստիպել քուրդին սպա-
սել Արաքսի այս ափում, Արաքսի քարափ-
ներում, մինչև ոչխարի ծնելը, անկարելի է
շատ յայտնի կլինայական պատճառներով. սկս-
վող սոթը և արտի բացակայութիւնը կարող
են մեծ ջարդ առաջ բերել ոչխարի հօտերի
մէջ, իսկ բարձրացնել ոչխարը դէպի Արագած
նրա ծնելուց 15 օր չանցած, դարձեալ անկա-
րելի է, որովհետև գառը պէտք է երկու շա-
բաթվա ընթացքում հանգիստ առնէ իր ծնված
տեղում:

Մեր երկրի այդ երկու նշանաւոր գաւառա-

պետները, պաշտպանելով իրանց հողացողու-
թեանը յանձնված ժողովրդի շահերը, յարու-
ցած խնդրի շատ անբարձրան ևսուսմաներով
թիւնից յետոյ, կենս այն եղբակալութեան,
որ, ի նկատի առնելով տեղական պայմանները,
քուրդին չէ կարելի արգելել անցնել Արաքսը
աւելի շուտ, կամ աւելի ուշ, որ քօչը պէտք է
անցնէ Արաքսը իր սովորական ժամանակով,
միւս կողմից, ի նկատի ունենալով,
որ քօչը ստիպված է Արաքսի միւս ափում
կանգ առնելու 15 օր, մինչև որ գտնենք
հնարաւորութիւն ունենան բարձրանալ դէպի
Արագած, գաւառապետները հարկաւոր համա-
րեցին սպանողացնել և այն գիւղական հասա-
րակութիւնները շահերը, որոնց հողեր վրա
այդքան երկար կանգ են առնում քուրդը:
Որովեց հարկադրել քուրդին յայտնի պարտա-
ւորական յարաբերութիւնների մէջ մտնել այդ
գիւղական հասարակութեան հետ և այդպիսով
շատ հիմնաւոր կերպով վճուղեց մի խնդր, որ
շատ նշանաւոր է և շատ բարդ մեր երկրի
չափերի և մեր աշխարհայեցողութեան տեսա-
կէտից:

Մենք արձանագրեցինք այստեղ մեր քօչի
կացութեան նշանաւոր պայմաններից մէկը.
այդ գրութիւնը ընդհանուր է Անդրկովկասում,
ամեն տեղ մի և նոյն խնդիրները և մի և
նոյն ընդհարումներ և, ինչ ասել կուզէ, որ
տեղական վարչութեան փորձառութիւնից է

որ միջնորդ առեւտրականները շահվում են միջին թեւով հարկերին երեսուն, երեսնայն իսկ աւելի քան հարկերին հարկեր, կը տեսնենք, թէ որքան օգտակար է ժողովրդի տեսակէտից սպառողական ընկերակցութիւնների գոյութիւնը:

Եթէ դրա վրա աւելացնենք այն օգուտը, որ ունենում են այդ ընկերակցութիւնները, պարագայով եւ արտադրութեամբ, օրինակ, գործարաններ բանեցնելով եւ այլն, կը համարձայնենք պ. Somodանցի հետ, որ, յիշաւի, սպառող—արտադրող ընկերակցութիւնները ժողովրդին ազատելով «խանութեան» վնասը, մի եւ նոյն ժամանակ նրա գրպանն են դնում եւ այն շահը, որ ստանում են կապիտալիստները—գործարանատէրերը եւ այլն:

II

Dr V. Totomiantz. „Une experimentation cooperative en Suisse“. Paris 1900.

Այս ֆրանսերէն գրքից վ. պ. Վ. Somodանցի ծանօթացնում է մեզ մի շվեյցարական հետաքրքիր սպառող—արտադրող ընկերակցութեան (կոօպերատիւ) հետ, Այդ Բազելի մօտ գտնվող Բիրսէլ գիւղի ընկերակցութիւնն է, որ կրում է «Zur Zukunft» («Ինչպիսի պագան») նշանակալից անունը: Այդ ընկերակցութեան նպատակն է բարւոյն իր անդամների ներթափանցելու մտաւոր կեանքի պայմանները:

Բիրսէլի ընկերակցութիւնը, բացի նրանից, որ մասնակարարում է իր անդամներին լաւ յատկութեան եւ էժան մթերքների, չինել է բնակարաններ նրանց համար, առել է մի հացահատիկ ձեռնարկ թանգարան (աւելի քան 3,700 ր. արժեքով) մեքենայ, որից փոխէփոխ օգտվում են անդամները, հրատարակում է իր յատուկ թերթը, որի բաժանորդագրութիւնը պարտադիր է բոլոր անդամների համար, դնել է մի կաֆէ-թէստօրան, որին շատ հետաքրքիր բնակարաններ է տուել (ոչ ոք այնտեղ պարտական չէ խնել եւ կարող է մնալ որքան կամենայ. այդ հիւրանոցի դահլիճում մի ժամանակ, երբ տեղական կաթովի եկեղեցին նորոգվում էր, կաթօրիկների աստուածաշատութիւնն էր կատարվում ասուածները, իսկ երեկոյան նոյն դահլիճը ծառայում էր բանտարանների ժողովների կամ նուազահանդէսների ու ներկայացուցիչների համար) եւ այլն եւ այլն:

Պ. Վ. Somodանցի այս գրքից էլ, ինչպէս վերեւը յիշված ուղեւորի գրքից, կարգացվում է հետաքրքրութեամբ:

S. Յ.

ՆԱԽԱՀԱՆՈՒՄԻ ԱՃՈՒՐԴԸ

Առաջիկայ չորեքշաբթի օր, նոյեմբերի 15-ին, Բագուի մէջ մի յատուկ պաշտօնական ատեսանում տեղի կունենայ նախաբեր հողերի անճուրդ: Ներքեւ բերած աղբիւսակից կը տեսնենք ընթացողը, որ անուրդի համար նշանակված է 25 կտոր հող 1-ից մինչեւ 10 դեցեմտին տարածութեամբ իւրաքանչիւրը: Այդ հողերի յատկութիւնը բնորոշելու եւ տուրքերը սահմանելու համար վերջին սինեակում նշանակված է նախաբեր այն քանակութիւնը, որ համարվում է նուազագոյնը որոշ կտոր հողի համար: Այն ան-

կախված դրական լուծում առլ այդ հարցերին: Այդ խնդիրները նոյնչափ ընթացիկ են, թէ ժ, որպէս եւ ինքը, մեր աշխարհի աղակալից դարունը... Տասնեակ տարիներ մեր ժողովուրդը մի եւ նոյն ճանապարհներով անցնում է դէպի իր սարերը, եւ տասնեակ տարիների ընթացքում, ամեն անգամ, այդ տեղերի չըջակայ գիւղերի ազգաբնակչութիւնը հազարավոր գանգաւորներ է տալիս քոչուրի վրա: Ոմանք խնդրում են քոչին մի այլ ճանապարհ ցոյց տալ, որպէս զի ոտնատակ չը լինեն ծոց ցանքերը, ուրիշները պահանջում են արդելով ելլալուորին կանգ առնել իրանց հողերի վրա եւ այլն:—Մեր երկրում, գլխաւորապէս մեր աշխարհի լեռնոտ տեղերում, ուր կանոնաւոր հողորդակցութեան ճանապարհներ չը կան, ուր ցանում եւ հրնձում են նոյնպէս վերին աստիճանի անկանոն կերպով, հարկաւոր կարգ ու կանոնի մասին խօսք անգամ լինել չէ կարող: Բնութիւնն ինքը, կարծես, բանաստեղծական անկարգութիւն է որոնում մեր երկրում. այսօր հարթ ու տափարակ տարածութիւն, վաղը աղակալից եւ արագընթաց մէ գետ, իսկ մի քանի շարաթից յետոյ քարերի մի անկարգ կուտակ նոյն տեղում, եւ ոչ մի հետք այն կախարչական բուսականութեան, որ մի ամիս դրանից առաջ այնպէս անվերջ շոյում էր ձեր աչքը եւ ճաշակը... Գուցէ ընտելեան այդ կապիղիներով պէտք է բացատրել եւ մեր ժողովրդի նոյնա-

ձինք, որոնց ձեռքը կրկին անուրդից յետոյ այդ հողերը, պէտք է տուրք վճարեն պետական գանձարանին՝ բազմապատկելով նախաբերից տուած այդ քանակութիւնը այն զին հետ, որ նրանք կառավարի են անուրդի ժամանակ:

Անուրդին մասնակցելու համար իւրաքանչիւր ցանկացող պէտք է ներկայացնէ ապագայ վճարի մի հինգերորդ մասը, իրեն կանխավճար կամ առհաւատչեայ: Յայտարարութիւնները պէտք է տրվեն փակ ծրարներով ոչ ուշ քան ժամի մէկը ցերեկվայ:

Այստեղ առաջ ենք բերում նախաձեռնողի աղբիւսակը:

Table with 4 columns: Երկրէ գտնվում, Նախաձեռնող, Նախաձեռնողի քանակութիւնը, Նոյն տարածութիւնը, Տարեկան նախաձեռնողական շուկայի շահը:

Այս աղբիւսակից երեւում է, որ ներկայ անճուրդի ամենալաւ հողերը գտնվում են Սարունչիում եւ Բիրսէլ-Շէյրաթում եւ ամենալատերը՝ Բիրսէլիում:

ՏՈՒՆԻՔ ՈՂՈՐՄԻՍ...

(Նամակ նոր-Նախիջևանից)

Նոր-Նախիջևանի Մարզաբերական ընկերութիւնը կնքեց իր մահկանացուն... Մարզաբերական ընկերութիւնը վաղուց արդէն մեռած էր. արդէն քանի տարիներից ի վեր ոչ ժողով էր լինում եւ ոչ էլ գործ. անդամներ կային, բայց փող չէին տալիս, փող ուզող էլ չը կարտարօրինակ ընկերութիւն էր: Այս օրերս եկա Վեհափառից կոնգրէսի յանձնել ընկերութեան գործը (ժողովուրդային 24 հարգով): Աղքատաց հոգաբարձութեան տոկոսներով պիտի պահվեն վեց ամսեր, երեքը թեմական դպրանոցում եւ երեքը Էլմիթի մեծարանում:

Մարզաբերական ընկերութիւնը հաստատված էր դեռ 1866 թիւն եւ ժամանակին բա-

նաման հակումները: Լեռնեցիները, ասում է մի գիտնական, միշտ չեն ցանում մի եւ նոյն տեղում, նրանք յաճախ տեղափոխում են իրանց արտերը այլ եւ այլ տեղ: Այդ աւելացնում է նոյն գիտնականը, յիշեցնում է նշանաւոր Տաղիտի վկայութիւնը հռոմայեցիների մասին. arva perannos mutant et superest ager: Գրեթէ այդպէս է եւ մեզանում:

Մեզանից շատ առաջ, այդ բոլորը բացատրվում էր մեր երկրի շատ նոյն ազգաբնակչութեամբ. չէ կարելի նոյն բացատրութիւնը տալ այդ երեւոյթին եւ այժմ Երկրի բնական տեղադրական պայմանները մի կողմից, միւս կողմից օրինակաբար ընկերական դաժապարի համարում նոյն երեւոյթի կրկնվելը եւ մեր օրերում: Միւս կողմից չէ կարելի մասնացոյց չանել այդ բարդ խնդրում եւ մեր երկրի հողափոխութեան վերին աստիճանի անկարգ, անորոշ գրութեան վրա Տասնեակ տարիներ առաջ, երբ մեր աշխարհը դեռ նոր էր մտնում զարգացման ժամանակակից շրջանի մէջ, երբ դատաստանական եւ շինական բէֆօրմները պէտք է օրինակաբար սերմ ածէին մեզանում, մենք չէինք կարող արտատրոյի չը սպասել մեր երկրի հողափոխութեանը: Մենք կարծում ենք, որ այդ աղբը աւելի որոշ, աւելի շոյափելի կը պատուաստէ մեզանում հողային այն կարգ ու կանոնները, որոնք այն ժամանակ այնչափ խառն եւ այնչափ անորոշ

էր. նա խնամում էր Ս. Սալի վաճառի ժողովուրդից զարգացող պահելով քան աններ (գիւղերով), տասը նոր-Նախիջևանից եւ տասը—գիւղացի: 1891-ին ժողովուրդը պահելով չէր եւ զարգացող փակվում է: 1893-ին զարգացող չէր նորից կառուցվել եւ աւելի գեղեցիկ եւ յարմար, քան թէ առաջ էր, գլխաւորապէս շնորհիւ այժմեան քաղաքագործի պ. Սալիանի, որը ընկերութեան վերջին նախագահն էր: Սրանից երկու տարի առաջ զբարոյցը նորից փակվեց եւ առ միշտ Մարզաբերական ընկերութեան նպատակը կորաւ, որովհետեւ ընկերութեան միակ նպատակն էր զբարոյցը, զարգացող էր նրա ոգին, նրա միակ գործը:

Տանք ողորմիս եւ յիշեց հանգուցեալ Ե. Կ. Պօպովանին:

Նոր-Նախիջևանցիները մինչեւ այժմ միշտ լինում են նրան: Ելիփան Պօպովան Մարզաբերական ընկերութեան հիմնադիրն էր եւ զարմանալի բան, հանգուցեալը, որ միշտ մեր վարդապետների անհայտ թշնամի էր, իր բոլոր գործունէութիւնը դարձրեց վաճառի դպրանոցի վրա. միշտ գանդատվելով բարեկրօն վանահայրերից, նա դարձեալ ամեն օր յաճախում էր վանքը, որովհետեւ Մարզաբերական ընկերութեան դպրանոցը վանքումն էր: Մեռաւ Ելիփանը եւ Մարզաբերական ընկերութեան անդամները ետանգը թուլացաւ:

Կարծես Ելիփանն էր Մարզաբերական ընկերութեան ոգին:

Ընկերութեան ժողովները լինում էին սակաւ. զարգացող դարձած էր վանահայրերի խաղաղութեամբ, գանձապահը, նոյն իսկ անդամներ, փոխանակ աշխատելու. գործելու, ման էին դալիս հոկտեմբերի ճանճերի նման...

Չը կար Ելիփանը... Փոխանակ մանք այն քաչկու, շատերը մեր զարմանքից հանգստացան այժմ. հանգստացան, որովհետեւ կարիք չը կայ գոլուս մաշելու մեր վեց գիւղերի երկիւսների մասին. մընում են նրանք անուս եւ անկիրթ:

Ո՞վ արեւօք պիտի մտածէ մեր վեց գիւղերի վրա, քանի որ ուշ չէ, քանի որ կարելի է օգնել:

Գր. Չալխուչեան

ՆԱՄԱԿ ԿԱՂՁՈՒՄՆԻՑ

Նոյեմբերի 5-ին

Հակառակ ժողովրդի արտասուածքով եւ արար գայրոյթով կազմած բազմաստորագիր համախոսականին, հակառակ ժողովրդի չը տեսնված ոգեւորութեան եւ անտաճածն նուիրատուութիւնների—մի դրութիւն, որը արժան էր ամենայն քաղաքացիական եւ խրախուսանքի—մեր եկեղեցու չինութեան գործը դարձեալ յանձնվեց Չաքար աղային՝ շնորհիւ ժամացաբերութեան եւ աղայականութեան առաջ աստարացող ստրկական ոգու:

Էլմիթից մի աւելորդ անգամ եւս ցոյց տուցի, որ ինքը միայն անարգել գիտէ բազմութեան ձայնն ու իրաւունքը, որ ինքը հեռու է երբ եւ իցէ ժողովրդի իրաւունքը պաշտպանելու դաժապարից, եւ որտեղ կայ ժամաց կամ աղայամարդ, այնտեղ է նաեւ նրա ձայնն ու վճիռը: Ժողովրդի իրաւունքը վաճառել միշտ

դրութեան մէջ էին: Բայց մեր յոյսերը ապարդիւն էին: Ազգաբնակչութիւնը տարիների ընթացքում աճեց, փոխվեցին կեանքի պայմանները, առաջ եկան հազար ու մի ներքին բարդութիւններ, իսկ զուգընթաց այդ բոլորի հողափոխութիւնը չը լուծեց մեր հողային հանգուցը: Պարսից եւ թուրքաց օրերից մնացած մեր հողային իրաւունքները կծկվեցին աւելի բարդ, աւելի անորոշ, ժամանակակից դատարարութիւնը չը կարողացաւ ցանկալի կերպով կրթել մեր հակումները եւ Ալեքսանդր Սի-1864 թեւականի հիմնած տաճարում այսօր կուտակվել է սեփականութեան եւ խախտված իրաւունքների այնքան խառնուրդներ մի նիւթ, որ միայն Աստուած, կարծես, կարող է որոշել թէ որտեղ է վերջանում այդտեղ առաջ եւ չինծուս եւ ուրեմն, վերջապէս, այն մի քանի ճշմարիտ խօսքերը, որոնք այդքան տարբի ի վեր սպասում էին անաշուտութեան...

Այդպիսի դրութեան մէջ է մեզանում հողաբերական խնդիրը: Այդ բոլոր պայմանները, որոնք մենք հարեանցի կերպով յիշեցինք, ստեղծում են մեր ջոյի համար այնպիսի դրութիւն, որ թուրքաբնակները անխուսափելի է, բայց հետաքրքրական այն է, որ այդ թուրքաբնակները անխուսափելի են, նրանք կրկնվում են ամեն տարի, դարձանք, երբ քոչը սկսում է բարձրանալ դէպի լեռները եւ ոչ մի վճիռ չէ բաւականացնում վիճողներին: Վճիռ նորոգվում է գարնան հետ միասին... Գրաւ-

եւ հանապազ, ստրկանալ ուկէ հորթի առաջ, այս է եղել Էլմիթի միաբնակութեան մեծ մասի բնաբանն ու դաւանանքը պատմական հին ժամանակներից սկսված:

Ընթացողները անշուշտ կը յիշեն, որ այդ հասարակութիւնը, չը հանդուրժելով աղա բարբարի անասնձ կամայականութիւններին, ամեն օր տեսնելով անարգութեան եկեղեցական ու հասարակական սրբութիւնները, ընտրեց հոգաբարձուներ, որոնք ամենայն եռանդով սկսեցին շարունակել չինութեան գործը եւ հայտնաբերեց լավեցին գոհունակութեան, ցնծութեան ազգային թէ կանանց եւ թէ տղամարդկանց, թէ ծերերի եւ թէ երիտասարդների կողմից անխտիր:

Դրան էր ժողովրդի տուած ապտակը միշտ բռնանալու սովոր աղայի համար: Եւ ահա նա միջոցներ ձեռք առնելով կարողացաւ ճարել չորս անգործ մարդկանց, որոնց ճանապարհաձայն տալով ճանապարհ գնաց դէպի Էլմիթի կանխապէս փոխելով նրանց հագուստները՝ աւելի ազդեցիկ դարձնելու համար: Մի քանի օրից յետոյ ինքն էլ ներկայանալով Էլմիթի, ներկայացրեց կազմուածի ժողովրդին աղքատ, մուրացկան ու միանգամայն անկարող եկեղեցու չինութիւնը առաջ տանելու: Այդպիսով կարողացաւ կօշտակներից մէկն էլ ձեռք բերել իր օգտին, խեղդելով մի ամբողջ ժողովրդի ձայնը. բայց ժողովուրդը իր անդամները կուրծնեց չէ ուզում վաճառել չեռնութեան, նա այժմ սթափված խիստ նախանձախնդիր է դարձել իր իրաւունքների համար: Դրան ճշմարիտ ապացոյց կարող է լինել այն, որ մի անաւամարդ ժողովուրդը գումարվել է յօղուտ եկեղեցու չինութեան մտաւորապէս հինգ հազար րուբլի, իսկ մօտ ապագայում անշուշտ կը կրկնանապատկվի այդ գումարը, չը նայելով որ չինութիւնը աւարտելու եւ եկեղեցու ներքին բարեկարգելու համար հարկաւոր կը լինի միայն ութ հազար րուբլի:

Արդէն ընտրված է պատգամաւորութիւն, որին յանձնարարված է մինչեւ վերջին շունչը կուս ժողովրդի իրաւունքների համար եւ ոչ ոքի չը զիջանել:

Էլմիթից ներկայ դէպքում գործ ունի մի շատ փափուկ խնդիր հետ, որի հետադարձ կարգադրութեամբ միայն կարելի է խաղաղացնել հասարակութեան վրդովված խիղճը եւ ապագայ վտանգաւոր հետեւանքների առաջն առնել: Միթէ հէնց իրան Էլմիթից պատուաբեր է, որ մի օր եւ է գոհնիկ ոսկու պարկ, քաղաքում վաճառու պահանջները նրանից մի անուսձին պարծանքով հեռադիրներ խիէ մի քանի տեղ իր յարկանակի մասին եւ պատմէ ամեն տեղ, թէ 300 րուբլով կարողացել է այնքան գրաւել մեծից մինչեւ փոքրին, որ ոտնատակ է տուել մի ամբողջ ժողովրդի իրաւունքները:

Սակայն դեռ այդ բոլորը չէ. աղա բարբարի յանդուրժելու շնորհիւ չէ հասել, որ նա, առանց օրինական թոյլտուութեան եւ հրամանի, հեռադրով յայտնում է, որ ծերութեան եւ բազմաթիւ սխալագործութիւնների համար վեհափառի կոնգրակով ցմաճ քանանալութիւնից դաժապարհած Յովհաննէս քանանան նորից ընտրուված է. վերջինս էլ, առանց որ եւ է կար-

ողական կառավարութիւնները, այդ վճեքի առաջն առնելու, ամեն մի քոչին ուղեկցելու համար առանձին աստիճանաւորներ, հասարակական գրաւաններ են նշանակում, բայց այդ բոլոր պախաւտով միջոցները շատ քիչ կարելի են առաջ բերում, վճեքը կրկնվում են դարձեալ եւ անվերջ: Մեր լեռների արօտատեղիների մեծ մասը արքունական է, ամեն մի գիւղական հասարակութիւն, որ կայաղ է զբնում, ունի իր որոշ տեղը, իր շէրքը, արօտատեղի, որը քոչում է գարնան առաջին օրերից իր տուար-ոչխարով եւ որի համար որոշ տուրք է վճարում: Ամեն մի գիւղական հասարակութիւն, կայաղ դուրս գալիս, բաժանվում է որոշ մասերի, խմբերի. եւ այդ ամեն մի խմբի առաջնորդութիւնը յանձնվում է մի անտիրոջ, որ յայտնի կլիւ, յայտնի հաւատարմութիւն ունի գիւղական հասարակութեան մէջ: Այդ խմբապետը օրաբայի է անւանվում: Նա վարչական պարտաւորութիւններ ունի. երբ որ եւ է հարկ կամ օտարալիստին ժողովում, նրան են դիմում. նա պարտաւոր է հակել, որ վրանների շուրջը գիւղերով պահպաններ լինեն, երբ մի գողութիւն սպանութիւն է պատահում, օտարիակներ նրա միջոցով են կատարում այն բոլորը, ինչ որ պէտք է գործի քննութեան, բացման համար եւ այլն:

(Չը շարունակվի)

պարտութիւն ստանալու հոգեւոր իշխանութիւնից՝ սկսել է քահանայապետը ու պատարագ մատուցանել:

Անա ձեզ ընթերցող, էլ միտքով անհետաքննելով ընթացքի պտուղները: Դեռ աւելի ծանր եւ վտանգաւոր երեւոյթներ կարող են առաջ գալ, եթէ երկար միջոց իշխէ ու կարգադրութիւններ անէ կոյր եւ ազգի կամայականութիւնը, եթէ բռնաբարված մնան ժողովրդի իրաւունքները եւ, Ենովային մոռացած՝ անզգայ ոսկէ հորթի առաջ կատարվի ինկարկութիւնը:

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Նոյեմբերի 5-ին

Եկող ղեկավարներ ամսական քաղաքային վարչութեան տան մէջ տեղի կունենան նոր քաղաքագլխի, վարչութեան երկու անդամների եւ քառասուն ձայնաւորների ընտրութիւնները չորս տարի ժամանակով, սկսած 1901 թւականից:

Նոր դարի շէջում մեր առաջ դրված է մի մեծ եւ դժուարին գործ: Անցեալի դառն փորձերը մեզ պարզ հասկացրին մեր արած սխալները, որ մեր դուռնի իր չորսամասն գործակալութեան ընթացքում, ոչ մի աչքի ընկնող եւ լուրջ գործ չը կատարեց, բացի այն, որ ծանրաբեռնեց խեղճ շուշեցիներին ահագին ծախսերով: Ընչուով ժողովրդին, ինքնավարութիւնը ոչ մի բարիք չը տուեց. քաղաքային պաշտօնեաներից ոչ մէկը չէր հասկանում իր գերը, իր պարտականութիւնները: Մենք ակնհայտ եւ նոյն ցեխոտ ճանապարհներին, նոյն խաւար վաղոցներին, որ մեր թանգութիւնը, գրադարանը իր 8000 բ. արժողութեամբ գրքերով փթում է փակված. ժամհարանների հիւանդանոցը փակ է նոյնպէս...

Իսկ քաղաքի հոգատարները հանգիստ խղճով չարժենալու են արեւն պղտորել կանաչ սեղանի շուրջը:

Ինչ է մնում մեզ անել այդ ողորմելի դրութիւնից դուրս գալու համար.— միայն իսպառ ջնջել այժմեան կազմը, անշան բացատրութեամբ սեւացնել ընտրութիւնների ժամանակ մանրամասններին եւ նրանց նմաններին եւ միասնաբար ոչ ժողով, առանց կուսակցական անձնական շահերի, տանց կրօնի խարտութեան, առաջ քաշելու ետանդուն, զարգացած եւ երիտասարդ ոյժեր:

Ի դէպ, իշխանութիւնը հրամանագրել է, որ քրիստոնեայ եւ թուրք ձայնաւորները կարող են լինել մեր դուռնու մասնակցութեամբ: Քաղաքագլխի պաշտօնի համար հաւանակութիւնները եւ անուանումը բժիշկ Ն. Եարամիչեանցին եւ պ. Գ. Մելիք-Շահնազարեանին: Արցախեցի:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսաց Ալեքսանդրական կայսերական ընկերութեան թիֆլիսի բաժանմունքի վարչութիւնը խնդրում է մեզ հարորդել, որ չերամսպահների եւ մետաքաւաճառների համաժողովը, որ այդ ընկերութեան նախաձեռնութեամբ պիտի կայանար այս տարվայ նոյեմբերին թիֆլիսում, այժմ յետաձգվում է մինչեւ ղեկավարներ ամիսը:

Ստացանք երաժշտագէտ Նիկողայոս Տիրապետի նոր լոյս ընծայած «Եւրոպայի պարսկական բալլադը», յարմարեցրած դաշնամուրի վրա անկող համար: Ինչպէս յայտնի է, նոյն «Եւրոպայը» լոյս էր տեսել առաջ եւ ջութակի վրա անկող համար:

Նոյեմբերի 4-ին Պետերբուրգի գեղարուեստական ակադեմիայում տեղի ունեցաւ տարեկան հանդիսաւոր ակտ, որի ժամանակ յարգանք մատուցվեց Այվազովսկի, Լէվիտանի նկարիչների եւ ճարտարապետ Տոմիլյայի յիշատակին: Ակտի ժամանակ կարդացվեցին համառոտ տեսութիւններ նրանց գործունէութեան մասին:

Ժողովրդական դպրոցների ուսուցիչներին եւ ուսուցչուհիներին կենսաթոշակ տալու համար կազմված գրասարկը կը սկսէ իր գործունէութիւնը առաջիկայ 1901 թւի յունվարի մէկին: Այժմ ժողովրդական լուսաւորութեան միջնորդութեան մէջ մշակվում են աղիւսակներ կենսաթոշակների հայեցողը կարգի բերելու համար: Ենթադրութիւն կայ թոյլատրել մասնակցելու դրամարկին եւ գեմստվոյ ուսումնարանների ուսուցիչներին եւ ուսուցչուհիներին:

ԱնԱՆՑԱՅԻՑ մեզ գրում են. «Երկրայ տարվայ յունիսի 9-ին Ախալխալի ա. Փրկիչ եկեղեցու ծխականների կայացրած ժողովում վճարված էր նոյն եկեղեցու քառասուն կանուաւոր խումբ պահելու համար 200—400 ռուբլի տարեկան ծախս յատկացնել: Բայց մինչեւ այսօր այդ վճարը չէ հաստատված հոգեւոր բարձր իշխանութիւնից: Ժողովուրդը, զգալով ներդաշնակ կրօնեցողութեան անհրաժեշտութիւնը, այս օրերս մի խնդրագրով նորից դիմեց առաջնորդին, խնդրելով հաստատել յունիսի 9-ի ժողովի վճարը: Մեր եկեղեցին տարեկան մօտ 15—16 հազար ռուբլի եկամուտ ունի, ուրեմն նրա համար դժուար չէր լինի մի երեք հազար ռուբլի ծախսել կանուաւոր խումբ պահելու համար»:

ՂՈՒՐԱՅԻՑ. մեզ գրում են. «Ջրբերդի Խիզիր Շէյխա օղլին, որ անցեալ ամիս երկրորդ անգամ Ղուբայի բանտից փախել էր, Գիւրք մահալի կերկա գիւղում սպանվեց Հազարա գիւղացի Իգաեաթ Մամէդ Գլէրի օղլու ձեռքով: Գաւառը ազատված է սարսափելի չարագործից: Ուրիշ աւազակների ետեւիցն էլ հետամուտ են լինում, որ կալանաւորեն, կամ սպանեն»:

ԱնԱՆՑԱՅԻՑ մեզ գրում են. «Անցեալ հոկտեմբեր ամիս ընթացքում մի քանի գողութիւններ տեղի ունեցան քաղաքում: Բարեբաղբաբար, շուտով գողացված իրերից մի քանիսը, շուկայում վաճառելու ժամանակ, բռնվեցին մի կաղախի ձեռքին, որը ոստիկանութեանը յայտնեց այն ծարղկանց անունները, որոնցից ինքն առել էր: Երեւոյց, որ չորս հոգուց բաղկացած գողերի խումբ է կազմված եղել, ոստիկանութիւնը իսկոյն ձերբակալեց բոլորին: Բանտարկվածներից երեք հոգի անչափահաս են»:

ՂՈՒՐԱՅԻՑ մեզ գրում են. «Երկրայ տարվայ ամառը տարօրինակ, մերթ տաք, յաճախ անձրեւային եւ մերթ ցրտային, ունեցաւ իր վնասակար ազդեցութիւնը եւ մեղուապահութեան վրա: Ղուբայի գոլիկի սպիտակ մեղրը այս տարի այնքան սակաւ բերք է տուել, որ նոյն իսկ բաւական չէ եւ մեղուների համար. մեղուները կը կոտորվեն քաղցից: Զննված պաշարը սակաւ է նրանց համար. գոնէ խնայողութեամբ գործադրէին հէնց հիմիկվանից, երբ դեռ ցրտերը չեն սկսվել»:

ԲԱՅՈՒՄԻՑ մեզ գրում են. «Հոկտեմբերի 7-ին հողին յանձնեցին շամախցի Պ. Մարգարեանցի ամբիւր: Հանգուցեալը հարուստ դասակարգի էր պատկանում, եւ, ինչպէս լսեցինք, թողել է հետեւեալ կտակը. սեղիտ Մարգարեանցի ընկերութեան 5 հազար ռուբլի, Եւսախալու եկեղեցուն 3 հազար ռուբլի եւ նոյն քաղաքում հոգեկան հիւանդների համար չէքը շինելու 7 հազար ռուբլի, էլ միաձնի եւ երուսաղէմի վանքերին երեք-երեք հազար, 4 հազար ռուբլի քաղաքային վարչութեան, որի տուկովը չքաւոր աշակերտներ պիտի պահվին գրմանադիայի եւ բէյալկան դպրոցներում»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՆԱՆՑ ՀԱՐՏԸ ՅԲԱՆՄԱԿԱՆ ՍԵՆԱՏՈՒՄ

Նկատված երեւոյթ է արդէն, որ քաղաքակիրթ Եւրոպայն, ի դէմս իր պարլամենտների եւ կառավարութիւնների, խիստ պահպանողական դիրք է բռնել կանանց քաղաքական իրաւունքների հարցում: Մարդկութեան զննող սեռի երկարատեւ եւ յամառ ջանքերը մեծ դժուարութեամբ կարողանում են յաղթահարել եւրոպական ազգերի նոյնքան յամառ դիմադրութիւնը. տասնեակ տարիների աշխատանքով կանանց հազիւ հազ աջողութեամբ է մի-մի հատ քաղաքական իրաւունք կորցել այս կամ այն ազգի պարլամենտից կամ կառավարութիւնից: Հնաւանդ սովորութիւններով եւ արդիօրինակներով սնված եւ մեծացած Եւրոպայն, ընդհանուր առմամբ, շարունակում է նայել կանանց վրա այն հայեացքներով, որոնք շատ էլ հետո չեն գնացել միջին դարերի հայեացքներից: Նա կանանց համարում է դեռ եւս անչափահաս եւ վախկնտ է տալ նրանց ձեռք այնպիսի իրաւունքներ, որոնք, նրա կարծիքով, պէտք է անձեռնմխելի սեփականութիւն համարվին միմիայն տղամարդկանց համար:

Չը նայելով, որ փաստերը համոզեցուցին կերպով ապացուցանում են, որ կանանց քաղաքական եւ քաղաքացիական իրաւունքներ տալուց ոչ միայն չէ ստուգում ոչ մի ազգ, այլ ընդհակառակը՝ մեծապէս շահվում է նա կարողանալով այդ միջոցով բարեփոխումներ մտնողներ իր սօցիալական կեանքի այս կամ այն պարտէզում, բայց եւ այնպէս՝ նոյն իսկ եւրոպական ամենազարգացած եւ ամենալուրջ պարլամենտը—անգլիականը—գոգհոգութեամբ է լրատում շատ անգամ կանանց իրաւունքներն ընդլայնելու վերաբերեալ հարցերը եւ ձգձգութեամբ է այդ հարցերը տասնեակ տարիների ընթացքում: Մի առանձին դիմադրութեան են հանդիպում այդ հարցերը այն երկիրներում, որոնց պարլամենտը բաղկացած է երկու ժողովներից—պատգամաւորների ժողովից եւ սեռնատից. եւ հէնց այս վերջինն է, որ բոլոր ազգերի մէջ, ի թիւս շատ ուրիշ բարենորոգչական ծրագրերի, թաղում է, երբեմն եւ ընդմիջող, կանանց խնդիրները, հանրագրերը, նրանց վերաբերեալ օրինագծերը: Եւ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, մինչ պատգամաւորական ժողովները բաղկացած են լինում մեծ մասամբ ժողովրդի թարմ, երիտասարդ ուժերից, երկրի առաջադէմ տարրերից, սեռնատներում ժողովված են կամ ժառանգական ազնուականներ, հնութեան ետանդուն պաշտպաններ, կամ ամենալուրջ դէպքում, կամ ամենալուրջ սօցիալական ժողովների լաւագոյն ձգտումները սօցիալական բարեփոխութիւնների հարցում:

Ի պատիւ ֆրանսիական սենատի պէտք է ասել, որ նա այս անգամ, հոկտեմբերի 31-ի նիստում, հրաժարվեց իր սովորական դիմադրութիւնից այնպիսի հարցում, որ վերաբերում էր կանանց իրաւունքներն ընդլայնելուն: Այդ նիստում ընկնում էր մի օրինագիծ, որով իրաւաբանական իրականութիւն է իրաւաբանի դիպլոմ ստացած կանանց թոյլ է տրվում փաստաբանութիւն անել տղամարդ փաստաբանների իրաւունքներով: Օրինագիծը արդէն ընդունված է ֆրանսիական պառլամենտների ժողովից՝ Դէյանէլի, Պուանկարէի, Բարտուի, Լէօն Բուրժուայի եւ ուրիշների առաջարկութեամբ: Սենատում խիստ կերպով յարձակվեց օրինագիծը վրա սենատոր Գուրմիւ, որ աշխատանքում էր ապացուցանել, թէ օրինագիծը բոլորովին անպէտք է: Միջոցով պահանջում են,—ասաց նա,—որ մենք անենք այն, ինչ որ չէ կարողանում անել մինչեւ անգամ ամենակարող անգլիական պարլամենտը, այսինքն, որ մենք կնոյր դարձնենք տղամարդ (ծիճակ) նա չեմ դիմի չափազանցութիւնների, չեմ պնդում, որ օրինագիծը մի վտանգաւոր բան է հասարակութեան համար: Եթէ նա ընդունվի, նա կաւելայնէ միայն մեր անօգուտ օրէնքների թիւը: Ամբողջ աշխարհում միայն երկու պետութիւնների մէջ կան կին-փաստաբաններ: Դա Շվեյցարիան է, որտեղ կանանց փաստաբանական դասակարգը բաղկացած է ընդամենը երկու հոգուց: Եւ Միացեալ-Նահանգները, որտեղ կին-փաստաբանները երբէք չեն երեւում դատարաններում: Յիշելով ապա այդ տեսակ հետաքրքիր սովորական խօսքերը, թէ կանանց դերազանցութիւնը եւ ոյժը զգեղնակութեան, խելքի, սրտի ազնուութեան եւ կանացիութեան» մէջ է, Գուրմիւ կործեց է յայտնում, որ կանանց չը պէտք է տալ այնպիսի իրաւունքներ, որոնք զրկէին նրանց այդ ընական շնորհներից:

Օրինագիծի զեկուցանող Տիլլէ յայտնեց, թէ Գուրմիւի ապացուցանելը բոլորովին անհիմն են: «Օրինագիծը հեղինակները,—ասաց Տիլլէ,—զեկուցարկել են բոլորովին ընական զգացումներով—մի պարագայում երկու սեռի հաւասարակութեամբ մատչելի դարձնելու ցանկութեամբ: Այս բանի մէջ ոչինչ չը կայ, որ հակառակ լինէր խելքի եւ առողջ դատողութեան»:

Ապա նիստում խօսք տրվեց արդարագատութեան միջոցով Մոսկոյի, որ յայտնեց, թէ կառավարութիւնը կարող է տալ այնպիսի օրինագիծ, թէ պէտք է նա չը կայ կառավարութեան ծրագրի մէջ: «Օրէնսդիրը—ասաց Մոսկոյ—չէ կարող հեռացնել կնոյր փաստաբանական գործից այն պատրուակով, թէ իրը նրա տեղը չէ այդ կինը չը պիտի զրկվի այն բոլոր տեղերից, ուր կատարվում է ոչորմանութեան եւ բարեբարութեան գործը, հետեւապէս եւ դատարաններում փաստաբանութիւն անելուց: Գուրմիւ ասաց մեզ, թէ կինը զեկուցանում է տղամարդուց արտի ազնուութեամբ, բայց չէ որ փաստաբանը ամենից ակնի կարծի է այդ փաստագրին յատկութեան: Կայ եւ ուրիշ անխաղաղ պատճառ կանանց փաստաբանութեան իրաւունք տալու: Եթէ

մենք տալիս ենք դիպլոմներ, պէտք է տանք նաեւ համապատասխան իրաւունքներ: (Մափհարութիւններ): Սենատը 172 ձայների առաւելութեամբ ընդգրկւմ 34-ի ընդունեց օրինագիծը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Kölnische Zeitung» լրագրի թղթակիցը հարորդում է Լծոնոյից, որ պահպանողական շրջաններում գոն չեն Սոյաբիւրի կարիքտում տեղի ունեցած փոփոխութիւններից: Ամենից առաջ զարմանք է յարուցանում այն հանգամանքը, որ միջնորդութեան անդամների թիւը հասցրած է 20-ի, մի թիւ, որ մինչեւ այժմ չէ եղել: Ապա պահպանողական շրջաններում կարծում են, որ միջնորդութեան կազմի մէջ շատ են յօրք Սոյաբիւրի ազգականները: Նրա քեռորդի Արտուր Բալֆուրը զանաւորանի առաջին յօրք է, կրտսեր քեռորդի Ջերալդ Բալֆուրը առեւտրի դեպարտամենտի նախագահ է, նրա ավագ որդին—յօրք կրտսերին—արտաքին գործերի միջնորդ օգնական է: Ուլիդ է, Արտուր Բալֆուրը անկասկած նշանաւոր անձնաւորութիւններից մէկն է ամբողջ միջնորդութեան մէջ, բայց նոյնը չէ կարելի ասել Ջերալդ Բալֆուրի մասին: Ինչ վերաբերում է յօրք Սոյաբիւրին պէտք է ասել, որ եթէ նա լաւ ծովային միջնորդ լինի, դրանով զարմանք կը պատճառէ շատերին: Բայց ամենից ակնի զարմանում է յօրք կրտսերին, Սոյաբիւրի որդուն, արտաքին գործերի միջնորդ օգնական նշանակելը: Առաջին միջնորդի աւագ որդին եւ ժառանգը մինչեւ այժմ ոչ մի բանով յայտնի չէ դարձրել իրան համայնքների ժողովում, յայտնի է միայն, որ նա սաստիկ հետաքրքրվում է անգլիական եկեղեցու մէջ տեղի ունեցող մանր-մուր ինտրիգներով: Համեմատաբար ակնի խոչոր անձնաւորութիւն է յօրք Սոյաբիւրի կրտսեր որդին, յօրք Սոսի, որ սաստիկ նման է իր հօրը եւ ոչ ոք չէր զարմանայ, եթէ արտաքին գործերի միջնորդ օգնական նշանակվէր նա եւ ոչ նրա աւագ կղբայրը:

«Birmingham Post» լրագրի ասելով Ռուսաստանը եւ Ֆրանսիան իրար մէջ յայտարար փոխանակելին, որոնցով երկու պետութիւնները համաձայնեցին, որ պէտք է ամեն միջոց գործ դնել բանակցութիւնները Չինաստանի հետ արագացնելու համար, որովհետեւ անհարկաւոր ձգձգումները կարող են ոչ միայն վտանգաւոր լինել եւ առաջ բերել բարդութիւններ, այլ եւ ակնյայտել պետութիւնների ծայրերը, հետեւապէս եւ համապատասխան վարձատրութեան չափը, որ պէտք է ստացվի Չինաստանից: Ռուսաստանը եւ Ֆրանսիան մտադիր են այս առիթով դիմել եւ միւս պետութիւններին:

Պրուսիայի ժողովրդական լուսաւորութեան միջնորդութիւնը քիչ ժամանակ առաջ հրատարակեց շրջաբերական, որով թոյլ է տրվում պրուսական բարձրագոյն տեխնիկական դպրոցները մտնել այն ուսուցաւորակներին միայն, որոնք ունեն վկայագրեր ուսման ընթացքը որ եւ միջնակարգ դպրոցում աւարտած լինելու մասին եւ կամ ուրիշ վկայագրեր, որոնք իրաւունք են տալիս նրանք մտնելու ուսուցող բարձրագոյն տեխնիկական դպրոցները:

ՄՇԱԿԻ՝ ՀԵՆՈՒԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

8 Նոյեմբերի

ԼՈՆԴՈՆ: Կապուտադոյից ստացված մասնաւոր տեղեկութիւններին նայելով՝ Տրանսկապի ժամանակաւոր նախագահ Եւլ-Բուրգեր վախճանվեց Իօաննեսնաւորդի հիւանդանոցում վէրքերից:

ԵԱՆԳՆԱՅԻՑ: Հարորդում են, թէ զաշնակիցները վճեցին ձեռք առնել ակնի խիստ միջոցներ գործը ճիշտմամբ հասցնելու համար: Նանկիինի քաղաքային Պեկիւնց պահանջ է ուղարկված վճարականապէս յայտնելու իր վերաբերմունքը չինական արքունիքին ուսուցիչէն մատակարարելու գործին:

Հարորդում են կայսրուհու դադոնի հրամանի մասին, որ համոզում է փոխարքաներին եւ նահանգապետներին անյապաղ պատրաստվել պատերազմի դաշնակիցների դէմ երկրի բոլոր մասերում:

Չինական արքունիքը խիստ ցանկութիւն ունի հեռանալու Մինանֆուից, որովհետեւ զրբականներն են սնայարտութիւնները եւ կրում, բայց նա լիովին կարտուկ ունի Տուեֆուեանից, որի ձեռքի սակ գտնվում է Սինանֆուում 16,000 զօրք:

ՄԱՐՍԻԷ: Քաղաքը զարգարվեց զորքերով եւ դրօշակներով. փողոցներում կրիւզերին սպառում է ժողովրդի հագին բազմութիւն:

9 Նոյեմբերի ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Թաղաւոր կայսրի առողջութեան համար մայրամբներ կատարելու մա-

